

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌՎԱՐՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԱՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	41
3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	73

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը կազմվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից՝ «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա:

Ուղեցույցը մշակվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան մարմինները տարիներ շարունակ իրականացրել են վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության գործընթացներ, սակայն այդ գործընթացները կանոնակարգող նորմեր, իրավակարգավորումներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված են եղել մասնակի, և ամբողջական կարգավորված չեն եղել այդ գործընթացների ընթացակարգային առանձնահատկությունները:

2018 թվականին ընդունված քաղաքացիական ծառայության ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ արդեն իսկ ամրագրվել են վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության գործընթացները կանոնակարգող դրույթներ, սահմանվել են այդ գործընթացներից հետո անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները, ուստի սույն ուղեցույցի նպատակն է օժանդակել համապատասխան մարմիններին վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության գործընթացներն առավել արդյունավետ իրականացնելու և Օրենքով նախատեսված կարգավորումները միատեսակ կիրառելու համար:

**1. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համապատասխան մարմնի վերակազմակերպումն իրականացվում է միաձուլման, միացման, առանձնացման, բաժանման կամ վերակազմավորման ձևերով:

Համապատասխան մարմինների **միաձուլում** է համարվում, երբ երկու կամ ավելի համապատասխան մարմիններ միաձուլման ձևով վերակազմակերպվում են՝ ստեղծելով նոր համապատասխան մարմին, և միաձուլվող համապատասխան մարմինները դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծված համապատասխան մարմնին:

Համապատասխան մարմնի **միաձուլման ձևով** վերակազմակերպման դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Վերակազմակերպման արդյունքում ստեղծվող մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից համապատասխան մարմինների միաձուլման ձևով վերակազմակերպման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձին: Տվյալ դեպքում գլխավոր քարտուղարի լիազորությունները՝ մինչև այդ պաշտոնում Օրենքով սահմանված կարգով վերանշանակում կատարելը կամ պաշտոն զբաղեցնելը, իրականացնում է միաձուլվող համապատասխան մարմինների այն գլխավոր քարտուղարը, որն ունի տվյալ պաշտոնում առավել երկար աշխատանքային ստաժ, իսկ այս պայմանի հավասարության դեպքում նրանցից համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձին որոշում է միաձուլման արդյունքում ստեղծված համապատասխան մարմնի ղեկավարը: Գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձը վերակազմակերպման արդյունքում ստեղծվող մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի

նախագծերը ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձը հաստատում է վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Նախ՝ միաձուլման ձևով համապատասխան մարմինների վերակազմակերպման դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանման գործառույթներն իրականացնում է այն համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, որի գլխավոր քարտուղարն իրականացնում է միաձուլման արդյունքում ստեղծված համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի լիազորությունները՝ մինչև նոր ստեղծված համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատողների Օրենքով սահմանված կարգով վերանշանակվելը կամ այդ պաշտոնները զբաղեցնելը:

Համապատասխան մարմնի միաձուլման ձևով վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես, եթե համապատասխան մարմնի միաձուլման ձևով վերակազմակերպման ժամանակ նոր ստեղծված համապատասխան մարմնի և վերակազմակերպվող համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը չի կրճատվում (օրինակ՝ Գյուղատնտեսության

նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 210 է, իսկ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում՝ 190, այս երկու մարմինների միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվում է Էկոնոմիկայի նախարարությունը, և Էկոնոմիկայի նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է, այսինքն՝ դառնում է 400), ապա վերակազմակերպվող համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Օրինակ՝

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և զարգացման նախարարության վարչական վերահսկողության վարչության առաջատար մասնագետ Տիգրան Արմենի Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 29-ի N 170-Ն որոշման 21-րդ կետը՝ Ձեզ առաջարկվում է զբաղեցնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության ավագ իրավաբանի (պաշտոնի ծածկագիրը) պաշտոնը:

_____ (ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)

---- (ամիս, ամսաթիվ)

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողներն անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Իսկ առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեգերվում:

Օրինակ՝

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության վարչական վերահսկողության վարչության առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Տիգրան Արմենի Հակոբյանս, տալիս եմ իմ համաձայնությունը վերանշանակվելու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության ավագ իրավաբանի (պաշտոնի ծածկագիրը) պաշտոնին:

(ստորագրություն)
---- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

Եթե համապատասխան մարմնի միաձուլման ձևով վերակազմակերպման ժամանակ միաձուլվող համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը կրճատվում է, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների տվյալները, պաշտոնների անվանացանկը, այդ թվում՝ այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Համապատասխան մարմնի միաձուլման ձևով վերակազմակերպման ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե միաձուլման ձևով վերակազմակերպվող համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

ՀՐԱՄԱՆ N -Ա

ՏԻԳՐԱՆ ԱՐՄԵՆԻ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 29-ի N 170-Ն որոշմամբ, --- կանոնադրության ----- կետով, հիմք ընդունելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2019 թվականի ----ի N--- հրամանը և Տիգրան Հակոբյանի գրավոր համաձայնությունը.

հրամայում եմ.

1.Տարածքային կառավարման և զարգացման նախարարության վարչական վերահսկողության վարչության առաջադարձ մասնագետ (պաշտոնի ծածկագիրը) Տիգրան Արմենի Հակոբյանին 2019 թվականի մայիսի 3-ից վերանշանակել

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության ավագ իրավաբանի (պաշտոնի ծածկագիրը) պաշտոնին:

2. Աշխարավարձը սահմանել՝ ----- դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

(ստորագրություն)
---- (ամիս, ամսաթիվ)

(անուն, ազգանուն)

Միաձուլվող համապատասխան մարմիններում գլխավոր քարտուղարի պաշտոն զբաղեցնող անձանց համար նույնպես նախատեսված են ընթացակարգային առանձնահատկություններ: Մասնավորապես, եթե համապատասխան մարմնի միաձուլման ձևով վերակազմակերպման ժամանակ միաձուլվող համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը չի կրճատվում, ապա վերակազմակերպվող համապատասխան մարմիններում գլխավոր քարտուղարի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է Օրենքով սահմանված կարգով հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Եթե գլխավոր քարտուղարը գրավոր համաձայնություն է տալիս առաջարկվող պաշտոնին վերանշանակվելու վերաբերյալ, ապա գլխավոր քարտուղարին առաջարկվող պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն ընդունում է գլխավոր քարտուղարին տվյալ պաշտոնին վերանշանակելու մասին անհատական իրավական ակտ՝ առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնից ազատելու: Իսկ եթե միաձուլվող համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը կրճատվում է, ապա նոր ստեղծված համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարին Օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատելուց և վերանշանակումները կատարելուց հետո առաջարկվում է

Օրենքով սահմանված կարգով հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Գրավոր համաձայնության դեպքում գլխավոր քարտուղարին առաջարկվող պաշտոնին վերանշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համապատասխան իրավական ակտով գլխավոր քարտուղարը վերանշանակվում է առաջարկվող պաշտոնին՝ առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնից ազատելու, իսկ եթե չի տալիս գրավոր համաձայնություն, ապա գլխավոր քարտուղարին ազատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համապատասխան իրավական ակտով գլխավոր քարտուղարն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և Օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե վերակազմակերպվող համապատասխան մարմիններում գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցված է ժամկետային աշխատանքային պայմանագրով, ապա գլխավոր քարտուղարի գրավոր համաձայնության դեպքում կնքվում է համաձայնագիր՝ գլխավոր քարտուղարի զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող գլխավոր քարտուղարը չի տալիս գրավոր համաձայնություն առաջարկվող պաշտոնին վերանշանակվելու վերաբերյալ, ապա ժամկետային աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Համապատասխան մարմինների միաձուլման ձևով վերակազմակերպման դեպքում կանոնակարգված են նաև վերակազմակերպվող համապատասխան մարմինների կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները, համաձայն որի՝ համապատասխան մարմինների միաձուլման ձևով վերակազմակերպումից հետո համապատասխան մարմինների կադրերի ռեզերվը շարունակում է վարել նոր ստեղծված համապատասխան մարմինը՝ որպես այդ համապատասխան մարմնի մեկ միասնական կադրերի ռեզերվ:

Օրինակ՝

Եթե Մշակույթի նախարարությունը, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն ու Կրթության և գիտության նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվում են՝ ստեղծելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ապա այս դեպքում միաձուլվող մարմինների կադրերի ռեզերվը շարունակում է վարել նոր ստեղծված մարմինը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

Համապատասխան մարմինների **միացում** է համարվում, երբ մեկ կամ մի քանի համապատասխան մարմին (մարմիններ) միանում են մեկ այլ համապատասխան մարմնին, և միացող համապատասխան մարմինը (մարմինները) դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ նրանց իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են այն համապատասխան մարմնին, որին միացել են:

Համապատասխան մարմնի (մարմինների) **միացման ձևով** վերակազմակերպման դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Միացման արդյունքում վերակազմակերպվող մարմնի կանոնադրությունը կամ կանոնադրության մեջ փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահից համապատասխան մարմինների միացման ձևով վերակազմակերպման գործընթացն իրականացնում է այն համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը, որին միանում է այլ համապատասխան մարմինը (մարմինները): Գլխավոր քարտուղարը կազմում է վերակազմակերպման արդյունքում ստեղծվող մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարը հաստատում է վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Նախ՝ միացման ձևով համապատասխան մարմինների վերակազմակերպման դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանման գործառույթներն իրականացնում է այն համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, որին միանում է այլ համապատասխան մարմինը (մարմինները):

Համապատասխան մարմնի միացման ձևով վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե համապատասխան մարմնի միացման ձևով վերակազմակերպման ժամանակ միացող համապատասխան մարմնի (մարմինների) քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը չի կրճատվում (օրինակ՝ Սփյուռքի նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 60 է, իսկ Վարչապետի աշխատակազմում՝ 370, այս երկու մարմինների միացման ձևով վերակազմակերպման արդյունքում Վարչապետի աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է, այսինքն՝ դառնում է 430), ապա միացող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով միացող համապատասխան մարմնի (մարմինների) քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքով սահմանված ժամկետում համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններից ազատվելու, իսկ առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով, ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե համապատասխան մարմնի միացման ձևով վերակազմակերպման ժամանակ այն համապատասխան մարմնի, որին միանում են և միացող համապատասխան մարմնի (մարմինների) քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում միացող համապատասխան մարմնի (մարմինների) քաղաքացիական ծառայողների տվյալները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների

հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Համապատասխան մարմնի միացման ձևով վերակազմակերպման ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե միացող համապատասխան մարմնում (մարմիններում) քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Միացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է, որ համապատասխան մարմնի անվանման և (կամ) կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարն Օրենքով սահմանված կարգով կազմում և

քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն համապատասխան մարմնի (մարմինների) միացման արդյունքում քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների հետ կապված պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը: Այս դեպքում այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որին միանում են, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Օրինակ՝

Սփյուռքի նախարարությունը միանում է Վարչապետի աշխատակազմին, և միացման ձևով վերակազմակերպման արդյունքում Վարչապետի աշխատակազմի անվանափոխություն և (կամ) կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Վարչապետի աշխատակազմի ղեկավարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն Սփյուռքի նախարարության միացման արդյունքում քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների հետ կապված պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը, իսկ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Այս դեպքում միայն միացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում համապատասխան փոփոխություններ:

Միացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է, որ փոփոխվի այն համապատասխան մարմնի անվանումը, որին միանում է այլ համապատասխան մարմին (մարմիններ), սակայն կառուցվածքի

փոփոխություն տեղի չունենա: Այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է միայն այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացում է այդ մարմնի պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, իսկ այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որին միանում են, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Օրինակ՝

Մշակույթի նախարարությունը միանում է Կրթության և գիտության նախարարությանը, և միացման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվում է Կրթության, գիտության և մշակույթի նախարարություն, այսինքն՝ տեղի է ունենում Կրթության և գիտության նախարարության անվանափոխություն: Այս դեպքում Կրթության, գիտության և մշակույթի նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն Կրթության և գիտության նախարարության անվանափոխությամբ պայմանավորված պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Այս դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

Միացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է նաև, որ համապատասխան մարմնի կառուցվածքում, որին միանում է այլ համապատասխան մարմին, ավելանան նոր կառուցվածքային ստորաբաժանումներ, սակայն համապատասխան մարմնի անվանափոխություն տեղի չունենա: Այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը

պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է կառուցվածքում ավելացած նոր կառուցվածքային ստորաբաժանումների փոփոխությամբ պայմանավորված տվյալ համապատասխան մարմնի անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ համապատասխան մարմնի այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են վերակազմակերպմանը:

Օրինակ՝

Գյուղատնտեսության նախարարությունը միանում է Բնապահպանության նախարարությանը, և միացման ձևով վերակազմակերպման արդյունքում Բնապահպանության նախարարության կառուցվածքում ավելանում են նոր կառուցվածքային ստորաբաժանումներ, սակայն անվանափոխություն տեղի չի ունենում: Այս դեպքում Բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում կառուցվածքում ավելացած նոր կառուցվածքային ստորաբաժանումների փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են վերակազմակերպմանը:

Միացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է նաև, որ փոփոխվեն այն համապատասխան մարմնի, որին միանում է այլ համապատասխան մարմին, անվանումը և կառուցվածքում ավելանան նոր կառուցվածքային ստորաբաժանումներ: Տվյալ դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված տվյալ համապատասխան մարմնի անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Օրինակ՝

Գյուղատնտեսության նախարարությունը միանում է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը, և միացման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվում է Էկոնոմիկայի նախարարություն, այսինքն՝ տեղի է ունենում էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության անվանափոխություն և կառուցվածքում ավելանում են նոր կառուցվածքային ստորաբաժանումներ: Այս դեպքում Էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում նաև Էկոնոմիկայի նախարարության անվանափոխությամբ և կառուցվածքում նոր կառուցվածքային ստորաբաժանումների ավելացմամբ պայմանավորված պաշտոնների անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Այս դեպքում այդ համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ, իսկ այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որին միանում է այլ համապատասխան մարմին, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Համապատասխան մարմինների միացման ձևով վերակազմակերպման դեպքում կանոնակարգված են նաև վերակազմակերպվող համապատասխան մարմնի կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները, համաձայն որի միացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպումից հետո միացվող համապատասխան մարմնի կադրերի ռեզերվը շարունակում է վարել այն համապատասխան մարմինը, որին միացել է այդ համապատասխան մարմինը՝ որպես մեկ միասնական կադրերի ռեզերվ:

Օրինակ՝

Եթե Սփյուռքի նախարարությունը միանում է Վարչապետի աշխատակազմին, ապա այս դեպքում միացող մարմնի՝ Սփյուռքի նախարարության կադրերի ռեզերվը շարունակում է վարել Վարչապետի աշխատակազմը՝ որպես մեկ միասնական կադրերի ռեզերվ:

Համապատասխան մարմնի **առանձնացում է** համարվում, երբ համապատասխան մարմնի կազմից առանձնացման ձևով ստեղծվում է նոր համապատասխան մարմին (մարմիններ), և վերակազմակերպվող համապատասխան մարմնի իրավունքների և պարտականությունների մի մասը փոխանցվում է նոր ստեղծվող համապատասխան մարմին (մարմիններին)՝ առանց վերակազմակերպվող համապատասխան մարմնի գործունեության դադարման:

Համապատասխան մարմնի **առանձնացման ձևով** վերակազմակերպման դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից առանձնացող համապատասխան մարմնի վերակազմակերպման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձին: Տվյալ դեպքում գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում է այն համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը, որից առանձնանում է համապատասխան մարմինը՝ մինչև առանձնացող համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի պաշտոնը Օրենքով սահմանված կարգով զբաղեցնելը:

Գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձը կազմում է վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում

գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնողը հաստատում է վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Նախ՝ առանձնացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանման գործառույթներն իրականացնում է այն համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, որից առանձնանում է համապատասխան մարմինը՝ մինչև առանձնացող համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատողների Օրենքով սահմանված կարգով վերանշանակվելը կամ այդ պաշտոնները զբաղեցնելը:

Համապատասխան մարմնի առանձնացման ձևով վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե համապատասխան մարմնի առանձնացման ձևով վերակազմակերպման ժամանակ առանձնացող համապատասխան մարմնի (մարմինների) և վերակազմակերպվող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը չի կրճատվում, (օրինակ՝ Ֆինանսների նախարարությունից առանձնացման ձևով ստեղծվում է Պետական եկամուտների կոմիտեն, Ֆինանսների նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների ընդհանուր թիվը 922 է, առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում Ֆինանսների նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 577 է դառնում, իսկ Պետական եկամուտների կոմիտեում՝ 345, այսինքն՝ երկու մարմինների

առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է), ապա վերակազմակերպվող համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Իսկ առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե համապատասխան մարմնի առանձնացման ձևով վերակազմակերպման ժամանակ համապատասխան մարմնի և առանձնացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում առանձնացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների տվյալները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող

պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Համապատասխան մարմնի առանձնացման ձևով վերակազմակերպման ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե առանձնացող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան

հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Առանձնացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է, որ համապատասխան մարմնի անվանման և (կամ) կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարն Օրենքով սահմանված կարգով կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն առանձնացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը: Այս դեպքում այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան մարմինը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Ֆինանսների նախարարությունից առանձնացման ձևով սրբեղծվում է Պեղական եկամուտների կոմիտեն, և Ֆինանսների նախարարության անվանափոխություն և (կամ) կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն Պեղական եկամուտների կոմիտեի քաղաքացիական ծառայության նոր

պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը:

Առանձնացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է, որ փոփոխվի այն համապատասխան մարմնի անվանումը, որից առանձնանում է այլ համապատասխան մարմին, սակայն կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա: Ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Այս դեպքում այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է այլ համապատասխան մարմինը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Ֆինանսների նախարարությունից առանձնացման ձևով ստեղծվում է Պեդագոգական եկամուտների կոմիտեն, և առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում Ֆինանսների նախարարությունն անվանափոխվում է, սակայն կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում Պեդագոգական եկամուտների կոմիտեի քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անվանացանկի

փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը, ինչպես նաև Ֆինանսների նախարարության անվանափոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը՝ պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերի հետ միաժամանակ:

Առանձնացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է նաև, որ համապատասխան մարմնի կառուցվածքում, որից առանձնանում է այլ համապատասխան մարմին, գործունեությունը դադարեցնեն կառուցվածքային ստորաբաժանումներ, սակայն համապատասխան մարմնի անվանափոխություն տեղի չունենա, ապա այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված տվյալ համապատասխան մարմնի անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացում է նաև այդ համապատասխան մարմնի այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են վերակազմակերպմանը:

Այս դեպքում այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան մարմինը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Ֆինանսների նախարարությունից առանձնացման ձևով ստեղծվում է Պետական եկամուտների կոմիտեն, և առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում Ֆինանսների նախարարության կառուցվածքում որոշ կառուցվածքային ստորաբաժանումներ դադարեցնում են իրենց գործունեությունը, սակայն Ֆինանսների նախարարության անվանափոխություն տեղի չի ունենում: Այս դեպքում Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում Պետական եկամուտների կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը, ինչպես նաև Ֆինանսների նախարարության այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացում է նաև այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են վերակազմակերպմանը:

Առանձնացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է նաև, որ փոփոխվեն այն համապատասխան մարմնի, որից առանձնանում է այլ համապատասխան մարմին, անվանումը և կառուցվածքում գործունեությունը դադարեցնեն կառուցվածքային ստորաբաժանումներ: Այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված վերակազմակերպվող մարմնի պաշտոնների անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացվում են նաև այդ պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Տվյալ դեպքում այն համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան մարմինը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային

պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Ֆինանսների նախարարությունից առանձնացման ձևով ստեղծվում է Պետական եկամուտների կոմիտեն, և առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում Ֆինանսների նախարարությունն անվանափոխվում է, և կառուցվածքում որոշ կառուցվածքային ստորաբաժանումներ դադարեցնում են իրենց գործունեությունը: Այս դեպքում Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում Պետական եկամուտների կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը, ինչպես նաև Ֆինանսների նախարարության այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը՝ պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերի հետ միաժամանակ:

Համապատասխան մարմինների առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում կանոնակարգված են նաև վերակազմակերպվող համապատասխան մարմինների կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները, որոնց համաձայն առանձնացման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպումից հետո այդ մարմնի կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, իրենց ընտրությամբ, շարունակում են գրանցված մնալ իրենց նախընտրած համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում այն ժամկետով, որով գրանցված էին: Եթե կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողին համապատասխան մարմնի կադրերի ռեզերվի ընտրության մասին հնարավոր չէ տեղեկացնել, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ քաղաքացիական ծառայողին համապատասխան առաջարկության մասին տեղեկացնում է քաղաքացիական ծառայողի կողմից ներկայացված իր վերջին բնակության վայրի հասցեով կամ

Էլեկտրոնային փոստի միջոցով՝ վերակազմակերպման մասին համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Այս դեպքում քաղաքացիական ծառայողը համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, նույն կապի միջոցով տեղեկացնում է իր նախընտրած համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում ընդգրկվելու մասին, իսկ առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողն իրավունքի ուժով շարունակում է գրանցված մնալ այն համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում, որից առանձնացել է համապատասխան մարմինը:

Օրինակ՝
Ֆինանսների նախարարությունից առանձնացման ձևով ստեղծվում է Պեդական եկամուտների կոմիտեն, և առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում Ֆինանսների նախարարության կադրերի ռեզերվը շարունակում է վարել Ֆինանսների նախարարությունը, իսկ Պեդական եկամուտների կոմիտեի կադրերի ռեզերվը՝ Պեդական եկամուտների կոմիտեն: Ֆինանսների նախարարության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողներն իրենց ընտրությամբ շարունակում են գրանցված մնալ վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմիններից իրենց նախընտրած համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում այն ժամկետով, որով գրանցված էին:

Համապատասխան մարմնի **բաժանում** է համարվում, երբ համապատասխան մարմինը բաժանվում է երկու կամ ավելի նոր ստեղծվող մարմինների, և բաժանվող մարմնի համապատասխան իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծվող մարմիններին, իսկ բաժանվող համապատասխան մարմնի գործունեությունը դադարում է:

Համապատասխան մարմնի **բաժանման ձևով** վերակազմակերպման դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված համապատասխան մարմինների կանոնադրություններն ուժի մեջ մտնելու պահից բաժանվող համապատասխան մարմինների վերակազմակերպման գործընթացն

իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձին: Տվյալ դեպքում գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում է բաժանվող համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը՝ մինչև բաժանվող համապատասխան մարմինների այդ պաշտոններում Օրենքով սահմանված կարգով վերանշանակումներ կատարելը կամ այդ պաշտոններ զբաղեցնելը:

Բաժանվող համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում միաժամանակ երկու կամ ավելի բաժանված համապատասխան մարմինների պաշտոնների անվանացանկի վերաբերյալ առաջարկությունը և պաշտոնների անձնագրերի նախագծերը: Եթե բաժանված համապատասխան մարմնի (մարմինների) պաշտոնատար անձը (անձինք) Օրենքով սահմանված կարգով վերանշանակվել կամ այդ պաշտոնը(ները) զբաղեցվել է (են), ապա բաժանված համապատասխան մարմնի (մարմինների) Օրենքով սահմանված կարգով կազմված պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում նոր ստեղծված համապատասխան մարմնի (մարմինների) գլխավոր քարտուղարը:

Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնողը հաստատում է բաժանման արդյունքում ստեղծված մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Նախ՝ բաժանման ձևով համապատասխան մարմինների վերակազմակերպման դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանման

գործառույթներն իրականացնում է համապատասխան մարմնի մինչև բաժանումը գործող անձնակազմի կառավարման ստորաբաժանումը՝ մինչև նոր ստեղծված համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումների աշխատողների Օրենքով սահմանված կարգով վերանշանակվելը կամ այդ պաշտոնները զբաղեցնելը:

Համապատասխան մարմնի բաժանման ձևով վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե բաժանվող համապատասխան մարմնի և նոր ստեղծվող համապատասխան մարմնի (մարմինների) քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը չի կրճատվում, (օրինակ՝ Գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների ընդհանուր թիվը 230 է, բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծվում են Բնապահպանության նախարարություն և Շրջակա միջավայրի նախարարություն, որից Բնապահպանության նախարարությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 120 է, իսկ Շրջակա միջավայրի նախարարությունում՝ 110, այսինքն՝ բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է), ապա բաժանման ձևով վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը

համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին, առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե բաժանվող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը և նոր ստեղծվող համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում բաժանվող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների տվյալները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Համապատասխան մարմնի բաժանման ձևով վերակազմակերպման ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե բաժանվող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Համապատասխան մարմնի բաժանման ձևով վերակազմակերպման դեպքում կանոնակարգված են նաև բաժանվող համապատասխան մարմնի կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները, համաձայն որի բաժանման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպումից հետո այդ մարմնի կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, իրենց ընտրությամբ, շարունակում են գրանցված մնալ բաժանման արդյունքում ստեղծված նոր՝ իրենց նախընտրած համապատասխան մարմնի կադրերի

ռեզերվում այն ժամկետով, որով գրանցված էին: Եթե կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողին համապատասխան մարմնի կադրերի ռեզերվի ընտրության մասին հնարավոր չէ տեղեկացնել, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ քաղաքացիական ծառայողին համապատասխան առաջարկության մասին տեղեկացնում է քաղաքացիական ծառայողի կողմից ներկայացված իր վերջին բնակության վայրի հասցեով կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ վերակազմակերպման մասին համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Քաղաքացիական ծառայողը համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, նույն կապի միջոցով տեղեկացնում է իր նախընտրած համապատասխան մարմնի կադրերի ռեզերվի մասին: Առաջարկությունը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողն իրավունքի ուժով շարունակում է գրանցված մնալ բաժանման արդյունքում ստեղծված այն համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում, որն ունի հաստիքների առավելագույն թվաքանակ, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ այն համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում, որի կանոնադրությունը ավելի շուտ է հաստատվել:

Օրինակ՝
Գյուղատնտեսության նախարարությունը բաժանման ձևով վերակազմակերպվում է և ստեղծվում են Բնապահպանության նախարարություն և Շրջակա միջավայրի նախարարություն: Այս դեպքում Գյուղատնտեսության նախարարության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները շարունակում են գրանցված մնալ վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմիններից իրենց նախընտրած համապատասխան մարմնի կադրերի ռեզերվում այն ժամկետով, որով գրանցված էին:

Համապատասխան մարմնի **վերակազմավորում** է համարվում, երբ փոփոխվում է այդ համապատասխան մարմնի կարգավիճակը, և նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերակազմավորված համապատասխան մարմնին:

Համապատասխան մարմնի **վերակազմավորման** ձևով վերակազմակերպման դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Վերակազմավորման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից վերակազմավորվող համապատասխան մարմնի վերակազմակերպման գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնող անձին: Տվյալ դեպքում վերակազմակերպման գործընթացն իրականացնում է մինչև համապատասխան մարմնի վերակազմավորումը նշանակված համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը՝ մինչև այդ պաշտոնում Օրենքով սահմանված կարգով վերանշանակում կատարելը կամ այդ պաշտոնը զբաղեցնելը:

Գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնողը կազմում է վերակազմակերպման արդյունքում ստեղծվող մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնողը հաստատում է վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Վերակազմակերպման արդյունքում ստեղծված մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Նախ՝ վերակազմավորման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանման

գործառույթներն իրականացնում է համապատասխան մարմնի մինչև վերակազմավորումը գործող անձնակազմի կառավարման ստորաբաժանումը՝ մինչև անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատողների Օրենքով սահմանված կարգով վերանշանակվելը կամ այդ պաշտոնները զբաղեցնելը:

Համապատասխան մարմնի վերակազմավորման ձևով վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես, եթե համապատասխան մարմնի վերակազմավորման ձևով վերակազմակերպման ժամանակ վերակազմավորված համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում, (օրինակ՝ Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը վերակազմավորվում է որպես Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 89 է, վերակազմավորման արդյունքում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում, այսինքն՝ 89 է), ապա վերակազմավորվող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է մինչև վերակազմավորումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են

առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Իսկ առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե համապատասխան մարմնի վերակազմավորման ձևով վերակազմակերպման ժամանակ վերակազմավորված համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, ապա այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների տվյալները, պաշտոնների անվանացանկը, այդ թվում՝ այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Համապատասխան մարմնի վերակազմավորման ձևով վերակազմակերպման ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե վերակազմավորման ձևով վերակազմակերպվող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Վերակազմավորման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է, որ փոփոխվի վերակազմակերպվող մարմնի անվանումը, սակայն կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարն Օրենքով սահմանված կարգով կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում վերակազմակերպված մարմնի պաշտոնների անվանացանկի փոփոխությունը և պաշտոնների անձնագրերի նախագծերը:

Այս դեպքում այդ համապատասխան մարմնի պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում: Այդ համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և(կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Ազգային վիճակագրական ծառայությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպվում է որպես Վիճակագրական կոմիտե, այս դեպքում Վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում վերակազմակերպված մարմնի պաշտոնների անվանացանկի փոփոխությունը և պաշտոնների անձնագրերի նախագծերը:

Վերակազմավորման ձևով համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում հնարավոր է նաև, որ վերակազմակերպման արդյունքում փոփոխվեն այդ համապատասխան մարմնի անվանումը և համապատասխան մարմնի կառուցվածքում ավելանան կամ գործունեությունը դադարեցնեն կառուցվածքային ստորաբաժանումներ, ապա տվյալ դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը Օրենքով սահմանված կարգով կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում վերակազմավորված մարմնի պաշտոնների անվանացանկի փոփոխությունը և պաշտոնների անձնագրերի նախագծերը:

Այս դեպքում այդ համապատասխան մարմնի այն քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, որոնց փոփոխությունը պայմանավորված է միայն անվան փոփոխությամբ, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր

պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ համապատասխան մարմնի կառուցվածքում ավելացած կամ գործունեությունը դադարեցրած կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Համապատասխան մարմնի վերակազմավորման ձևով վերակազմակերպման դեպքում կանոնակարգված են նաև վերակազմակերպվող համապատասխան մարմնի կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները, որի համաձայն համապատասխան մարմնի վերակազմավորման ձևով վերակազմակերպումից հետո վերակազմակերպվող մարմնի կադրերի ռեզերվը շարունակում է վարել վերակազմավորված համապատասխան մարմինը՝ որպես այդ համապատասխան մարմնի մեկ միասնական կադրերի ռեզերվ:

Օրինակ՝
Եթե Ազգային վիճակագրական ծառայությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպվում է որպես Վիճակագրական կոմիտե, ապա այս դեպքում Ազգային վիճակագրական ծառայության կադրերի ռեզերվը շարունակում է վարել նոր ստեղծված մարմինը՝ Վիճակագրական կոմիտեն՝ որպես այդ համապատասխան մարմնի կադրերի ռեզերվ:

**2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԱՆԵՐԸ ԵՎ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կառուցվածքային փոփոխություն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների միաձուլման, միացման, առանձնացման, բաժանման,

վերակազմավորման կամ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակներով: Պետք է նշել, որ կառուցվածքային փոփոխություն է նաև կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող ներքին կառուցվածքային միավորի փոփոխությունը, որն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանման փոփոխության համար կարգով նախատեսված ընթացակարգով:

Կառուցվածքային ստորաբաժանումների **միաձուլում** է համարվում, երբ երկու կամ ավելի կառուցվածքային ստորաբաժանումներ միաձուլման ձևով վերակազմակերպվում են՝ ստեղծելով նոր կառուցվածքային ստորաբաժանում, և միաձուլվող կառուցվածքային ստորաբաժանումները դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծված կառուցվածքային ստորաբաժանմանը:

Կառուցվածքային ստորաբաժանումների **միաձուլման եղանակով** կառուցվածքային փոփոխության դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Կառուցվածքային փոփոխության վերաբերյալ համապատասխան մարմնի կանոնադրության մեջ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո կառուցվածքային ստորաբաժանումների միաձուլման եղանակով կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում է միաձուլման արդյունքում ստեղծված կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարը հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, քաղաքացիական ծառայողները

վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Կառուցվածքային փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Համապատասխան մարմնի միաձուլման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե միաձուլման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում, (օրինակ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության և իրավաբանական բաժնի միաձուլման արդյունքում ստեղծվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչությունը, վարչական վերահսկողության վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 7-ն է, իսկ իրավաբանական բաժնում՝ 6, և իրավաբանական վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է, այսինքն՝ դառնում է 13), ապա կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողներն, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային

օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե միաձուլման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում այն քաղաքացիական ծառայողների տվյալները, որոնք ընդգրկված են կառուցվածքային փոփոխության մեջ, այդ թվում նաև այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Կառուցվածքային ստորաբաժանումների միաձուլման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Կառուցվածքային ստորաբաժանումների **միացում** է համարվում, երբ մեկ կամ մի քանի կառուցվածքային ստորաբաժանումներ միանում են մեկ այլ կառուցվածքային ստորաբաժանման, և միացող կառուցվածքային ստորաբաժանումը (ստորաբաժանումները) դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են միացվող կառուցվածքային ստորաբաժանմանը:

Կառուցվածքային ստորաբաժանումների **միացման եղանակով** կառուցվածքային փոփոխության դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Կառուցվածքային փոփոխության վերաբերյալ համապատասխան մարմնի կանոնադրության մեջ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո կառուցվածքային ստորաբաժանումների միացման եղանակով կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում է միացման արդյունքում ստեղծված կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարը հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Կառուցվածքային փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Համապատասխան մարմնի միացման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝ եթե միացման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում (օրինակ՝ Առողջապահության նախարարության իրավական ապահովման բաժինը միանում է իրավաբանական վարչությանը, և միացման արդյունքում ստեղծվում է

Առողջապահության նախարարության իրավաբանական վարչությունը, իրավական ապահովման բաժնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվ 5-ն է, իսկ իրավաբանական վարչությունում՝ 7, և իրավաբանական վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է, այսինքն՝ դառնում է 12), ապա կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե միացման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում այն

քաղաքացիական ծառայողների տվյալները, որոնք ընդգրկված են կառուցվածքային փոփոխության մեջ, այդ թվում նաև այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Կառուցվածքային ստորաբաժանումների միացման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների

գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Միացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է, որ կառուցվածքային ստորաբաժանման անվանման և կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն կառուցվածքային ստորաբաժանման միացման արդյունքում քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների հետ կապված պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և այդ պաշտոնների անձնագրերի նախագծերը: Բացի այդ, միացվող կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ միացող կառուցվածքային ստորաբաժանման (ստորաբաժանումների) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Առողջապահության նախարարության օրենսդրության կադարելագործման և վերլուծության բաժինը միանում է իրավաբանական վարչությանը, և միացման ձևով կառուցվածքային փոփոխության արդյունքում իրավաբանական վարչության անվանափոխություն և կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն օրենսդրության կադարելագործման և վերլուծության բաժնի միացման արդյունքում քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների հետ կապված պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերը, իսկ իրավաբանական վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Միացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է, որ փոփոխվի այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, որին միանում է այլ կառուցվածքային ստորաբաժանում, սակայն կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, իսկ միացվող կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում: Այդ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային

աշխատանքային պայմանագրերում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Առողջապահության նախարարության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժինը միանում է իրավաբանական վարչությանը, և միացման ձևով կառուցվածքային փոփոխության արդյունքում իրավաբանական վարչությունն անվանափոխվում է օրենսդրության մշակման և կատարելագործման վարչության: Այս դեպքում Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում միայն կառուցվածքային ստորաբաժանման անվանափոխությամբ պայմանավորված պաշտոնների անվանացանկի փոփոխությունները և պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Միացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է, որ կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքում, որին միանում է այլ կառուցվածքային ստորաբաժանում, ավելանան ներքին կառուցվածքային միավորներ, սակայն կառուցվածքային ստորաբաժանման անվանափոխություն տեղի չունենա, այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է կառուցվածքում ավելացած նոր կառուցվածքային միավորների փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ կառուցվածքային ստորաբաժանման այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են կառուցվածքային փոփոխությանը:

Օրինակ՝

Առողջապահության նախարարության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժինը միանում է իրավաբանական վարչությանը, և միացման ձևով կառուցվածքային փոփոխության արդյունքում իրավաբանական վարչության

անվանափոխություն տեղի չի ունենում, սակայն կառուցվածքում ավելանում են ներքին կառուցվածքային միավորներ: Այս դեպքում Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում կառուցվածքում ավելացած ներքին կառուցվածքային միավորների փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են վերակազմակերպմանը:

Միացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է նաև, որ փոփոխվի այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, որին միանում են և վերջինիս կառուցվածքում ավելանան ներքին կառուցվածքային միավորներ: Այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված տվյալ կառուցվածքային ստորաբաժանման անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ պաշտոնների նոր անձնագրերի կամ պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Օրինակ՝

Առողջապահության նախարարության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժինը միանում է իրավաբանական վարչությանը, և միացման ձևով կառուցվածքային փոփոխության արդյունքում իրավաբանական վարչությունն անվանափոխվում է օրենսդրության մշակման և կատարելագործման վարչության և կառուցվածքում ավելանում է ներքին կառուցվածքային միավոր: Այս դեպքում Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացնում անվանափոխությամբ և կառուցվածքում ներքին կառուցվածքային միավորի ավելացմամբ պայմանավորված պաշտոնների անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և այդ մարմնի պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Այս դեպքում այն կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում, որին միանում են՝ նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության,

աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ միացող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Կառուցվածքային ստորաբաժանման **առանձնացում է** համարվում, երբ կառուցվածքային ստորաբաժանման կազմից առանձնացման ձևով ստեղծվում է նոր կառուցվածքային ստորաբաժանում (ստորաբաժանումներ), և կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման իրավունքների և պարտականությունների մի մասը փոխանցվում է նոր ստեղծվող կառուցվածքային ստորաբաժանմանը (ստորաբաժանումներին)՝ առանց կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման ըման:

Կառուցվածքային ստորաբաժանումների **առանձնացման եղանակով** կառուցվածքային փոփոխության դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Կառուցվածքային փոփոխության վերաբերյալ համապատասխան մարմնի կանոնադրության մեջ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո կառուցվածքային ստորաբաժանման առանձնացման եղանակով կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում է առանձնացման արդյունքում նոր ստեղծված կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարը հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և

պաշտոնների անձնագրերը: Համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Կառուցվածքային փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Համապատասխան մարմնի առանձնացման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե առանձնացման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում (օրինակ՝ եթե Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում է իրավական աջակցության վարչություն, միջազգային իրավական համագործակցության վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 12 է, առանձնացման եղանակով կառուցվածքային փոփոխության արդյունքում միջազգային իրավական համագործակցության վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 8 է դառնում, իսկ իրավական աջակցության վարչությունում՝ 4, այսինքն՝ երկու կառուցվածքային ստորաբաժանումների առանձնացման եղանակով կառուցվածքային փոփոխության արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է), ապա կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն

զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե առանձնացման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում այն քաղաքացիական ծառայողների տվյալները, որոնք ընդգրկված են կառուցվածքային փոփոխության մեջ, այդ թվում նաև այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ

պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Կառուցվածքային ստորաբաժանումների առանձնացման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում

վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Առանձնացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է, որ կառուցվածքային ստորաբաժանման անվանման և կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում այն կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անվանացանկի փոփոխությունը, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, ինչպես նաև առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման (ստորաբաժանումների) պաշտոնների անվանացանկի առաջարկությունը՝ համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միասին: Բացի այդ, այս դեպքում այն կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում է իրավական աջակցության վարչություն, և միջազգային իրավական համագործակցության վարչության անվանափոխություն և (կամ) կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական

ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում միջազգային իրավական համագործակցության վարչության պաշտոնների անվանացանկի փոփոխությունը, ինչպես նաև իրավական աջակցության վարչության պաշտոնների անվանացանկի առաջարկությունը՝ համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ միասին, իսկ միջազգային իրավական համագործակցության վարչության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Առանձնացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է, որ փոփոխվի այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում, սակայն կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացվում են նաև այդ կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը: Բացի այդ, այն կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում է իրավական աջակցության վարչություն, և միջազգային իրավական համագործակցության վարչությունն անվանափոխվում է միջազգային հարաբերությունների վարչության, սակայն կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև միջազգային հարաբերությունների վարչության համապատասխան փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը՝ միջազգային հարաբերությունների վարչության պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերի հետ միաժամանակ, իսկ միջազգային հարաբերությունների վարչության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Առանձնացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է նաև, որ կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքում, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում, գործունեությունը դադարեցնի (դադարեցնեն) ներքին կառուցվածքային միավոր (միավորներ), սակայն կառուցվածքային ստորաբաժանման անվանափոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված տվյալ կառուցվածքային ստորաբաժանման անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ կառուցվածքային ստորաբաժանման այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են կառուցվածքային փոփոխությանը: Բացի այդ, այն կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր

պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչությունից առանձնացման եղանակով սրբեղծվում է իրավական աջակցության վարչությունը, և միջազգային իրավական համագործակցության վարչության կառուցվածքում ներքին կառուցվածքային միավորը դադարեցնում է իր գործունեությունը, սակայն միջազգային իրավական համագործակցության վարչության անվանումը չի փոխվում: Այս դեպքում Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև միջազգային իրավական համագործակցության վարչության այդ փոփոխությամբ պայմանավորված պաշտոնների անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև միջազգային իրավական համագործակցության վարչության այն պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնք առնչվում են կառուցվածքային փոփոխությանը, իսկ միջազգային համագործակցության վարչության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային սրբաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Առանձնացման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է նաև, որ փոփոխվի այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, որից առանձնանում է այլ կառուցվածքային ստորաբաժանումը և միաժամանակ նրա կառուցվածքում գործունեությունը դադարեցնի (դադարեցնեն) ներքին կառուցվածքային միավոր (միավորներ), ուստի այս դեպքում համապատասխան

մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ պաշտոնների նոր անձնագրերի կամ պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Օրինակ՝

Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում է իրավական աջակցության վարչությունը, միջազգային իրավական համագործակցության վարչության կառուցվածքում ներքին կառուցվածքային միավորը դադարեցնում է իր գործունեությունը, և միջազգային իրավական համագործակցության վարչությունն անվանափոխվում է միջազգային հարաբերությունների վարչության: Այս դեպքում Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև միջազգային հարաբերությունների վարչության այդ փոփոխությամբ պայմանավորված պաշտոնների անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև միջազգային հարաբերությունների վարչության պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, ընդ որում միջազգային հարաբերությունների վարչության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Բացի այդ, այն կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում, որից առանձնանում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում, իսկ առանձնացող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ)

համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Կառուցվածքային ստորաբաժանման **բաժանում** է համարվում, երբ կառուցվածքային ստորաբաժանումը բաժանվում է երկու կամ ավելի նոր ստեղծվող կառուցվածքային ստորաբաժանումների, և բաժանվող կառուցվածքային ստորաբաժանման համապատասխան իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են նոր ստեղծվող կառուցվածքային ստորաբաժանումներին, իսկ բաժանվող կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը դադարում է:

Կառուցվածքային ստորաբաժանումների **բաժանման եղանակով** կառուցվածքային փոփոխության դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Կառուցվածքային փոփոխության վերաբերյալ համապատասխան մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո կառուցվածքային ստորաբաժանման բաժանման եղանակով կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում է բաժանման արդյունքում նոր ստեղծված կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարը հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Կառուցվածքային փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Համապատասխան մարմնի բաժանման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողներն վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե բաժանման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում (օրինակ՝ Արտակարգ իրավիճակների նախարարության իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչությունից բաժանման եղանակով կառուցվածքային փոփոխության արդյունքում ստեղծվում են իրավական ապահովման վարչություն և միջազգային համագործակցության վարչություն, իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 15 է, բաժանման եղանակով կառուցվածքային փոփոխության արդյունքում իրավական ապահովման վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 9 է դառնում, իսկ միջազգային համագործակցության վարչությունում՝ 6, այսինքն՝ կառուցվածքային ստորաբաժանման բաժանման եղանակով կառուցվածքային փոփոխության արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը պահպանվում է), ապա կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր

համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե բաժանման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում այն քաղաքացիական ծառայողների տվյալները, որոնք ընդգրկված են կառուցվածքային փոփոխության մեջ, այդ թվում նաև այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների

հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Կառուցվածքային ստորաբաժանումների բաժանման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Կառուցվածքային ստորաբաժանման **վերակազմավորում** է համարվում կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակի փոփոխությունը: Կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային միավորի

վերակազմավորում է համարվում կառուցվածքային ստորաբաժանման ներքին կառուցվածքային միավորի կարգավիճակի փոփոխությունը, որի դեպքում կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքում կարող է (կարող են) ստեղծվել ներքին կառուցվածքային միավոր (միավորներ) կամ կարող է դադարեցվել գործող ներքին կառուցվածքային միավորի (միավորների) գործունեությունը: Կառուցվածքային ստորաբաժանման, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանման ներքին կառուցվածքային միավորի վերակազմավորման դեպքում նրանց իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերակազմավորված կառուցվածքային ստորաբաժանմանը:

Կառուցվածքային ստորաբաժանումների **վերակազմավորման եղանակով** կառուցվածքային փոփոխության դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Կառուցվածքային փոփոխության վերաբերյալ համապատասխան մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո կառուցվածքային ստորաբաժանման վերակազմավորման եղանակով կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կազմում է վերակազմավորված կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերի նախագծերը և ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր քարտուղարը հաստատում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների:

Կառուցվածքային փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողների վերանշանակման գործընթացն իրականացնելիս նախատեսված են հետևյալ առանձնահատկությունները:

Համապատասխան մարմնի վերակազմավորման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնների՝ իրենց համաձայնությամբ: Այսպես՝

Եթե վերակազմավորման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը չի կրճատվում (օրինակ՝ Ֆինանսների նախարարության անձնակազմի կառավարման վարչությունը վերակազմավորվում է որպես անձնակազմի կառավարման բաժին, անձնակազմի կառավարման վարչությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 11 է, վերակազմավորման արդյունքում անձնակազմի կառավարման բաժնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը 11 է, այսինքն՝ վերակազմավորման արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը պահպանվում է), ապա կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող նոր պաշտոնների մասին:

Քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են գրավոր համաձայնություն կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները, անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ

սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Եթե վերակազմավորման եղանակով կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին է ներկայացնում այն քաղաքացիական ծառայողների տվյալները, որոնք ընդգրկված են կառուցվածքային փոփոխության մեջ, այդ թվում նաև այն նոր պաշտոնների ցանկը, որին համապատասխանում են այդ քաղաքացիական ծառայողները: Տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն Օրենքով սահմանված կարգով ցանկից ընտրում է աշխատողներին: Այս դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմավորման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է առաջանա նաև քաղաքացիական ծառայողի առաջխաղացման՝ իր զբաղեցրած պաշտոնի խմբից

կամ ենթախմբից ավելի բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնելու դեպք: Այս դեպքում քաղաքացիական ծառայողն իր գրավոր համաձայնությամբ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից, և ազատման օրը նրա հետ կնքվում է քաղաքացիական ծառայության նոր պաշտոնի համար ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ առանց վերջնահաշվարկ կատարելու և առանց հայտարարություն հրապարակելու, որից հետո օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

Բացի այդ, եթե կառուցվածքային փոփոխության ենթարկվող համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանումում քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցված են ժամկետային աշխատանքային պայմանագրերով, ապա քաղաքացիական ծառայողների գրավոր համաձայնության դեպքում կնքվում են համաձայնագրեր՝ համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ զբաղեցնելու համար: Եթե ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները չեն տալիս գրավոր համաձայնություն կամ առկա չէ քաղաքացիական ծառայողների զբաղեցրած պաշտոնին համապատասխան հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն, ապա ժամկետային աշխատանքային պայմանագրերը վաղաժամկետ լուծվում են՝ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացման հիմքով: Տվյալ դեպքում վերացել է ժամանակավոր թափուր պաշտոնը, որը զբաղեցվում էր ժամկետային աշխատանքային պայմանագրով:

Վերակազմավորման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է, որ փոփոխվի վերակազմակերպված կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, սակայն կառուցվածքի փոփոխություն տեղի չունենա, ուստի այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև այդ փոփոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացնում է նաև այդ կառուցվածքային ստորաբաժանման պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը:

Բացի այդ, այդ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում: Այդ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և(կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային պայմանագրերում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում համապատասխան փոփոխություններ:

Օրինակ՝

Ֆինանսների նախարարության անձնակազմի կառավարման վարչությունը վերակազմավորվում է որպես մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, այսինքն՝ տեղի է ունենում վերակազմավորված կառուցվածքային ստորաբաժանման անվանափոխություն, սակայն կառուցվածքում փոփոխություններ տեղի չեն ունենում: Այս դեպքում Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը պաշտոնների անվանացանկի փոփոխության նախագծում ներառում է նաև անձնակազմի կառավարման վարչության անվանափոխությամբ պայմանավորված անվանացանկի փոփոխությունների առաջարկությունը և կից ներկայացվում են նաև անձնակազմի կառավարման վարչության պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու նախագծերը, իսկ անձնակազմի կառավարման վարչության պաշտոնների անձնագրերում նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Վերակազմավորման եղանակով համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության ժամանակ հնարավոր է նաև, որ փոփոխվի այդ կառուցվածքային ստորաբաժանման անվանումը և կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքում ավելանում կամ գործունեությունը դադարեցնում է (են) ներքին կառուցվածքային միավոր (միավորներ): Այս դեպքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը

կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում համապատասխան մարմնի պաշտոնների անվանացանկի փոփոխությունը և պաշտոնների անձնագրերի նախագծերը: Բացի այդ, այդ կառուցվածքային ստորաբաժանման այն քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, որոնց փոփոխությունը պայմանավորված է միայն անվան փոփոխությամբ, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Օրինակ՝

Ֆինանսների նախարարության անձնակազմի կառավարման վարչությունը վերակազմավորվում է որպես մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, այսինքն՝ տեղի է ունենում վերակազմավորված կառուցվածքային ստորաբաժանման անվանափոխություն, և կառուցվածքում գործունեությունը դադարեցնում է անձնակազմի հաշվառման ներքին կառուցվածքային միավորը: Այս դեպքում Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը կազմում և քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացնում Ֆինանսների նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պաշտոնների անվանացանկի փոփոխությունը և պաշտոնների անձնագրերի նախագծերը, ընդ որում անձնակազմի կառավարման վարչության այն քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, որոնց փոփոխությունը պայմանավորված է միայն անվան փոփոխությամբ, նոր պահանջներ և չափանիշներ՝ կրթության, աշխատանքային ստաժի կամ այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ, չեն սահմանվում:

Այն կառուցվածքային ստորաբաժանման (ստորաբաժանումների) քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում, որոնք վերակազմավորման արդյունքում ավելացել են կամ գործունեությունը դադարեցրել են, պաշտոնների նշանակման վերաբերյալ Օրենքով նախատեսված իրավական ակտերում և (կամ) համապատասխան ժամկետային աշխատանքային

պայմանագրերում կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ:

Կառուցվածքային ստորաբաժանման **գործունեության դադարեցումը՝** կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցումն է՝ առանց իրավունքների և պարտականությունների փոխանցման:

Կառուցվածքային ստորաբաժանումների **գործունեության դադարեցման** եղանակով կառուցվածքային փոփոխության դեպքում սահմանված են հետևյալ ընթացակարգային առանձնահատկությունները: Մասնավորապես՝

Կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակով կառուցվածքային փոփոխության վերաբերյալ համապատասխան մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարն ապահովում է համապատասխան ընթացակարգերի իրականացումը: Այսպես՝

Կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակով այդ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի կրճատման հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

Բացի այդ, կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակով կառուցվածքային փոփոխության ժամանակ համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կարող է կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողներին իրենց հաստիքային միավորով տեղափոխել կառուցվածքային փոփոխության չենթարկվող այլ կառուցվածքային ստորաբաժանում՝ հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնի: Այս դեպքում անձնակազմի կառավարման ստորաբաժանումը համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում է առաջարկվող պաշտոնների մասին:

Իրենց հաստիքային միավորով տեղափոխվող քաղաքացիական ծառայողները համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, տալիս են իրենց գրավոր համաձայնությունը կամ մերժում են առաջարկությունը: Առաջարկությանը համաձայնություն տալու դեպքում քաղաքացիական ծառայողները անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համապատասխան իրավական ակտով վերանշանակվում են առաջարկված պաշտոններին՝ առանց մինչև կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոններից ազատվելու: Առաջարկությունը մերժելու կամ սահմանված ժամկետում առաջարկությանը չպատասխանելու դեպքում քաղաքացիական ծառայողներն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու հիմքով ազատվում են զբաղեցրած պաշտոններից և կարող են իրենց դիմումի համաձայն գրանցվել կադրերի ռեզերվում:

3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ (ԿԱՄ)

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողների համար նախատեսված են որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես՝

Համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ, եթե համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը, այդ թվում՝ առանձնացման կամ բաժանման դեպքում նոր ստեղծված համապատասխան մարմինների և վերակազմակերպվող համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակի հանրագումարը չի կրճատվում, ապա վերակազմակերպվող և (կամ) կառուցվածքային փոփոխության

ենթարկվող համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին առաջարկվում է մինչև վերակազմակերպումը և (կամ) կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն զբաղեցնել: Եթե համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայության պաշտոնների թվաքանակը կրճատվում է, ապա տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողներն օգտվում են նախապատվության իրավունքից, որի համաձայն աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Բացի այդ, կառուցվածքային փոփոխության ժամանակ տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը կարող է կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին իր հաստիքային միավորով տեղափոխել կառուցվածքային փոփոխության չենթարկվող այլ կառուցվածքային ստորաբաժանում՝ հավասարազոր կամ ավելի ցածր քաղաքացիական ծառայության պաշտոնի: Այս դեպքում իր հաստիքային միավորով տեղափոխվող քաղաքացիական ծառայողի գրավոր համաձայնությունն անհրաժեշտ է ստանալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերի նախագծերը քաղաքացիական ծառայության գրասենյակ ներկայացնելուց առաջ՝ այն կցելով պաշտոնների անվանացանկի և պաշտոնների անձնագրերի նախագծերի հաստատման (փոփոխման) առաջարկությամբ ներկայացված հիմնավորմանը: Իր հաստիքային միավորով տեղափոխվող

քաղաքացիական ծառայողը համապատասխան մարմնի պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատվելուց (փոփոխվելուց) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում վերանշանակվում է համապատասխան քաղաքացիական ծառայության պաշտոնին, իսկ եթե վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողը ազատվում է զբաղեցրած պաշտոնից և գրանցվում քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում, ապա այդ կառուցվածքային ստորաբաժանումում տվյալ քաղաքացիական ծառայողը կարող է պաշտոն զբաղեցնել միայն Օրենքով նախատեսված մրցութային կարգով:

Առանձնահատկություններ են նախատեսված նաև «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով գործուղված դիվանագետի համար: Այսպես՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ, եթե քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնում է «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով գործուղված դիվանագետը, ապա դիվանագետի գրավոր համաձայնության դեպքում նա վերանշանակվում է հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնի՝ մինչև գործուղման ժամկետի ավարտը: Եթե դիվանագետն առաջարկությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, չի տալիս գրավոր համաձայնություն առաջարկված պաշտոնում վերանշանակվելու համար, ապա տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն ընդունում է անհատական իրավական ակտ՝ գործուղված դիվանագետին քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու վերաբերյալ: Այս դեպքում անհատական իրավական ակտն ընդունելուց հետո քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված դիվանագետի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքով:

Համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության դեպքում առանձնահատկություններ են նախատեսված նաև բացակայող քաղաքացիական ծառայողների համար: Բացակայող քաղաքացիական ծառայողների համար նախատեսված

առանձնահատկությունների համաձայն՝ համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ, եթե քաղաքացիական ծառայողը բացակայում է (արձակուրդի, ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, ժամանակավոր անաշխատունակության, պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու, վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու և Օրենքով սահմանված այլ դեպքերում) և տալիս է իր գրավոր համաձայնությունը, ապա քաղաքացիական ծառայողը, առանց աշխատանքի ներկայանալու, վերանշանակվում է վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքում առաջարկվող հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնի: Եթե վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողը բացակայում է և հնարավոր չէ այդ քաղաքացիական ծառայողին վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքում առաջարկվող պաշտոնի կամ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման մասին տեղեկացնել, ապա անձնակազմի կառավարման ստորաբաժանումը տվյալ քաղաքացիական ծառայողին համապատասխան առաջարկության մասին տեղեկացնում է փոստով՝ քաղաքացիական ծառայողի կողմից ներկայացված իր վերջին բնակության վայրի հասցեով կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ նույն կապի միջոցով, տալիս է գրավոր համաձայնություն կամ մերժում է առաջարկությունը: Առաջարկությունը մերժելու կամ առաջարկությանը չպատասխանելու դեպքում անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ վերանշանակման ժամկետի վերջին 10-րդ օրը քաղաքացիական ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և իր դիմումի համաձայն կարող է գրանցվել կադրերի ռեզերվում:

Այլ համապատասխան մարմնում գործուղման կարգով քաղաքացիական ծառայողի համար նույնպես նախատեսված են առանձնահատկություններ, որի համաձայն՝ եթե համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքում անվանացանկից հանվում է Օրենքի

12-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնը, ապա համապատասխան մարմինը նոր անվանացանկում նախատեսում է Օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնին հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոն: Տվյալ պաշտոնը համարվում է որոշակի ժամկետով թափուր և մինչև գործուղման ժամկետի ավարտը կարող է զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով: Գործուղման ժամկետի ավարտից հետո գործուղված քաղաքացիական ծառայողին առաջարկվում է նոր անվանացանկով նախատեսված հավասարազոր կամ ցածր պաշտոն: Եթե քաղաքացիական ծառայողը չի տալիս համաձայնություն առաջարկված պաշտոնին նշանակվելու համար, ապա այդ քաղաքացիական ծառայողն օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել կադրերի ռեզերվում: